



ԱՐԺՈՒՒ ՎԱԾՊՈՒՐԱԿԱՆ

ԹՈՒՆՅԱՆ, ՀԱՅԲԵՆԵՍԻՐ ԹԵՒՕԳ
ՅԵՐԺՐԱՒՆԻ ՄԵՆԵՍԵՆԻՆ ՎԱՐԴԱՆ

ԽՐԲԱԳԻՐ ՀԱՅԲԵՆԵՍԻՐ
ՄԿՐՏԻՉ ՎԱՐԴԱՊԵՏ ԽՐԲԱՆ

1862

Յ. Բ.

ՀԱՏՈՐ ՉԱՐՈՒՐ

ՌՅԺԱ

ՎԱՆՏՈՍՅԱՆ

Ի ՏՊԵՐԱՆԻ ՎԱՐՊՈՒՐԱԿԱՆ ԱՐԺՈՒՆՅԱՆ

Ի ՎԱՐԴԱՆ



THE UNIVERSITY OF CHICAGO

OFFICE OF THE DEAN OF THE FACULTY
540 EAST 58TH STREET, CHICAGO, ILL.

MEMBER OF THE FACULTY
JAMES H. HARRIS

CHICAGO, ILL. 60637
JAN 1 1968
JAMES H. HARRIS, JR.
DEAN OF THE FACULTY

մանադրութիւնը մարդկային ընկերութեան համար Աստուծոյ հրաշքով պարտաւ ճանչնալով թէ օրէնքը իբրեւ իշխան կ'ազատէ մարդոյն վերայ եւ մարդն ալ իբրեւ հպատակ պէտք է հնազանդի նորան :

— Յիշաւի՛ նոր յառաջադիմութեան համար այդ երկու միջոցը խիստ մեծ եւ կարեւոր է . բայց զորն աւելի նախադաս համարել պէտք է . կամ զորն է առաւել զօրաւորագոյն միջոցը, օրէնք, եթէ մարդը :

— Մարդոյն եւ օրէնքին մէջ ի՞նչ խտրութիւն կայ . թէ որ այսպէս մտածենք եթէ օրէնքը պարտաւ խոհականութիւն մի է . բայց օրէնքն ըստ ինքեան խելո՞ւ եւ ոգորմելի է , ոչ մի ազդեցութիւն չունի . գաւազանի մի նման գետին կիյնայ , եթէ զօրաւոր ձեռք մի զինքն չի բռնէ եւ չը պաշտպանէ : Երբ կարող էին այնչափ ծանրաբեռն օրէնքները Իսրայէլացւոց խստասիրտ ազգին վերայ տիրել՝ եթէ Մովսիսի նըման զօրաւոր պաշտպան մի չը լինէր :

— Արեւէ խօսեցար , ուրեմն Հայոց ազգին համար առաւել Մովսէս պէտք է քան եթէ օրէնք կամ Սահմանադրութիւնը . վստն զի մեր խստասրտութիւնն ալ՝ Հրէից խստասրտութենէն պակաս չէ . սակայն կուզեմ իմանալ Մովսէս չեղած տեղ՝ Սահմանադրութեան տախտակները ի՞նչ ուժ պիտի ունենան :

— Այո՛ այդ պէտք է . բայց մի յուսահատիր , թէ եւ հին դարերու նման սքանչելագործ Մովսիսներ չունի , սակայն ներկայ դարուս մէջ խելքի եւ հայրենասիրութեան Մովսէսները փոքր իշատէ կերեւան եւ շատերն ալ իբրեւ նորածին կայտառ Մովսէս Բիւզանդիոնի Վասիլիոս երեսը կամ Սովկասեան Կուր գետին վերայ պրտուեայ սնտուկին մէջ փակուած կ'տատանին . որոց ազատութեան եւ դաս-

Հին խտասրտութենէն կակղցած չէ . միտքն ալ տգիտա-
կան խակութեամբ կարճ մնացերէ . ուստի Եւրոպիոյ լուսա-
ւորեալ ազգերու առաջը ինքն նոր ծնած երախայ մի կը
ձեւանայ, իւր ախորժակը միայն կաթ կը սիրէ . այսինքն
փափուկ ու պարզ օրէնքները : Սահմանադրութեան պէս
հաստատուն եւ դժուարաճաշակ կերակուր ե՛րբ կարօղ է
դիւրութեամբ կամ ախորժանօք ուտել, մի թէ ազ-
գին մէջը գտնուած քանի մի ատամնաբոյս ուսումնական-
ները պիտի կարենան այդ քարապինդ Սահմանադրութիւն
իրբեւ հաց ծամել ու դնել չորս միլիոն Հայոց աղգի բե-
րանք :

— Ինականապէս մտածելով այդպէս է . վասնզի մեծ խո-
հականութիւն է, ազգին չափ ճանչնալ. նորալեզու մանուկ
մինչդեռ այս եւ բեն կարող չէ հնչել՝ խելագարութիւն է
քաղաքական իրաւանց դառ տւանդել նորան : Իսկ Հայոց
խտասրտութեան մասին համար այսչափ պատասխան
կուտամ քեզ , որ հին դարերու պէս չէ մնացեր
իւր խտութիւնը . վասն զի՝ իւր վերջի դարերու մէջ քա-
շած աղէտալի տառապանքները զինքն բաւական կակրղ-
ցուցեր են . ստրկութիւն , աղքատութիւն իւր ազատ
բարձր պարանոց խոնարհեցուցեր է : Ազգին խտասրտու-
թիւն չեմ կարծեր որ այնչափ բնական է , քան թէ առանց
օրինաց լուծի մնալով՝ բարանոցը կոշտացեր է . մի զարմա-
նար ասածիս, եղ մի թէ որ լուծ չի կրէ իւր վզին վերայ
հարկու վայրենի կ'դառնայ : Արեւելեան ազգաց առաջին
եւ չորս հազար տարուան հնադոյն աղղը, դու կասես, թէ
երեխայ է դեռ . չեմ գիտեր երբ պիտի մեծնայ եւ համի
յառաջադիմութեան արիական հասակը : Ազարմանամ
այդ անհիմն կարծիքին վերայ . իբրու թէ Սահմանադրու-

զանցօրէն խօսելով՝ կ'պնդեն թէ Հայաստանի վերանորոգութեան պատճառը միմիայն Սահմանադրական օրէնքներն են. բայց ես կ'զարմանամ, որ մեր ողորմելի Հայաստանը հնոտի պատրտած հանդերձի մի նման հազար ու մէկ կտոր եղած է. այդ Սահմանադրութեան նոր կարկտան պիտի կարենայ նորոգել կամ միանալ հնութեան հետը. այդ կարծիքը Աւետարանի պատգամին հակառակ չէ՞. անթափ կապերս հինցած ձորձի վերայ ձգել :

= Յիրաւի մարդիկներէն անհնարին կարծուած բանը, Աստուծոյ առաջը միշտ հնարաւոր է. բնութեան մէջ միշտ կ'տեսնամք, որ ամէն բանը կ'հնանայ եւ դարձեալ կ'նորոգի. միթէ այժմեան ձմեռնային վիճակ Հայոց՝ իւր համար դարուն եւ ամառ չպիտի՞ ունենայ : Աշխատութիւն ամէն բանը հնարաւոր կրնէ մարդոյն համար. այնչափ Եւրոպոյ զանազան ազգերը, որոնք բարբարոսութեան մէջը հնոտի հանդերձի պէս թել թել մաշուեր էին. ի՞նչպէս քիչ ժամանակի մէջ նորոգուեցան եւ այժմ բոլորն ալ ծաղկեայ պատմութեանով կ'պճնին. միթէ Հայու ազգային հանդերձը միշտ հնութեան մէջ պիտի մնայ :

= Չէ', չի մնար. բայց ազգային նորոգութեան հանդերձը կրկին կարելու համար ձեռք պէտք է, ձեռք պէտք է, կարող պէտք է. այսինքն մարդ պէտք է Սահմանադրութիւն պէտք է առանց ասոնց ո՞վ կ'հաւատայ թէ. Հայկազանց հանդերձ պիտի նորոգուի :

= Մեր արդի Հայաստանը միթէ զո՞րկ է բոլորովին այդ կարեւոր միջոցներէն. այսչափ երեւելի եւ արուեստաւոր

նմանապէս իւր ազգային հին հանդերձը այն աստիճան
կտոր կտոր եղած է, որուն վերայ կարկտան ձգելու երբէք
ճար չիկայ :

— Օյս բաւական համոզելու եղանակ էր այդ պատան
խանը . արդարեւ տգիտութեամբ թանձրացած Հայոց ան-
հեթեթ մարմինը նախ եւ առաջ դաստիարակութեան պա-
հոց օրէնքներով ճնշելու է . բայց տակաւին կուզեմ իմա-
նալ , երբոր ինքն անհնազանդ եւ ստահակ է , բժիշկնե-
րու դեղերը չի ընդունիր , դերձակներու կտրած նորաձեւ
հագուստներուն չի հաւնիր, ինչ կարելի բան է, որ դաստի-
արակութեան օրէնքներու լուծը՝ յօժարութեամբ իւր պա-
րանոցին վերայ առնէ, այդ եւս նեղ հանդերձի չի նմանիր :

— Ճշմարիտ է ասածդ . սակայն յուսահատիլ պէտք չէ,
միայն թէ հանդերձին ձեւը կամաց կամաց նեղցնելու է
մինչեւ սովորի , հոգ չէ այսօր չի հագնի վաղն անշուշտ
պիտի հագնի . եթէ որ հայր մերժէ՝ իւր զաւակը պիտի
ընդունի. թէ ուշ թէ անագան բոլոր աշխարհը պիտի հագ-
նի այդ հանդերձը , վսյ եկեր է այն ազգին , որ միշտ
հնութիւն սիրելով՝ հնութեան մէջ կ'մաշի եւ վերջապէս
կ'մեռնի :

— Այդ որ ասացիր, թէ հանդերձին ձեւը կամաց կամաց
նեղցնելու է . մի թէ այժմեան նոր կտրուած Սահմանա-
դրութեան հանդերձը Հայոց վիճակին համեմատ չէ՞ կամ
անձին համար շատ նեղ է :

— Ոչ բնաւ . շատ համեմատ եւ շատ յարմար է թէ վի-
ճակին եւ թէ անձին . բայց միայն կաշառակուր եւ շա-
հախնդիր թեւերու համար նեղ է . սակայն նոքա եւս թէպէտ
եւ առաջին անգամ նեղութիւն կ'կրեն . յետոյ Սահմանադր-
ութեան օրէնքը, զիրենք ճնշելով ճնշելով՝ կ'զլւարացնէ :

Ճառագրեն • Ահա այս անգամը կ'հաստատուեմք Արշա-
կունի Թագաւորաց վերջին Արտաշրի անկումն • Իսպահ
Պարթեւին իւր Քահանայապետական Աթոռէն մերժումն •
որուն մէջը պիտի տեսնուի փառախորհուրդ նախարարաց
յիմարու թիւնը եւ սուրբ Հայրապետին ջանքը հայրենի իշ-
խանութիւնը պաշտպանելու համար • Թող մտադիւրու-
թեամբ կարդալով ուշիմ ընթերցողը, ողբայ մեր նախնի
եղխանաց անմոռութեան վերայ եւ մանաւանդ անձնընտիր
փառասիրու թեան եւ կարճատես անքաղաքագիտու թեան •

ԹՎՏՐՈՒՆԿՆՆ ՍԼԳ

ՍԵՐՋԻՆ ԵՐՏՄԵՐԻ ԹՎԳԵԼԻՈՐ

ՏԵՍԱՐԱՆ Ա •

Տեսարանն է Սիւնեաց աշխարհին մէջը վարազվողան իշ-
խանին ապարանքը, այն տեղը կ'Ժողովին ամենայն նախա-
րարք Հայոց Արտաշրին համար խորհուրդ կազմել ու ձգել
զանի Թագաւորութեան դահէն • Ուր կ'ըսուին 'Նախա-
րարները ամէն մէկ իւրեանց աւագութեան աստիճանին
համեմատ խօսիլ կեկոխի եւ կառաջարկէ իբրեւ նախադաս
վարազվողան Տէրն Սիւնեաց •

ԱՆՁԻՆՔՆ ԵՆ

ՀԱՄԱԶԱՅՆՔ ՄՐՔՈՅՆ ՍԱՀԱԿԱՅ

Սմբատ տապեա Բաղրատունի •

Վարդան Ստրատուկատ •

Թեան մեր ամբողջ հայրենեաց համար մեծ կարեւոր խնդիր մի է . ո՛հ քանի անարգանք են քրիստոսի եկեղեցւոյն եւ կրօնին, եթէ Թողունք այնպէս . ո՛վ կարէ այնպիսի անպիտան գլուխ կրել իւր վրան ու չամչնալ :

ՎԱՐԱԶՎԱՂԱՆ

Ես այսպէս մտածեմ եւ կ'յուսամ , որ դուք ալ հաւանութիւն կուտաք . երթանք միաբանութեամբ եւ խնդիր տանք պարսից մեծ Ատենին եւ Վաւաթ Թագաւորին ձեռքով ձգենք զինքն Արշակունի գահէն :

ՀՄԱՅՆԱԿ ԱՇՈՑԱՑ ՏԵՐ

Այդ եղանակը շատ դիւրին է . միայն Թէ այս ալ գիտնալու է , որ Իսահակ Հայրապետ եւ զօրականներէն շատերը Արտաշրին պաշտպան են . գուցէ հակառակին եւ մեծ շփոթութեան եւ խռովութեան ասպարէզներ բացուի Հայոց աշխարհին մէջ . ուստի ալ աւելի ապահովութեամբ այդ բան գլուխ կերթայ , եթէ Իսահակ Հայրապետ եւ կուսակից զօրականներն ալ մեզի հետ միաբանին :

ՆԷՐՍԷՍ ՍՊԱՐԱՊԵՏ ՃԻՀՐԱՍԵՑԻ

Ներեցէք, նախարարք Հայոց , շատ վատ է այդ խորհուրդ եւ հեռատեսութեամբ չէք խորհիր . Թագաւոր ձգել , Թագաւորութիւն բառնալ . դուք որ զձեզ նոյն գլխոյն անդամ կ'համարիք , չէք դուշակեր արդեօք նոյն գլուխը բարձուելէն յետոյ՝ բոլոր անգամներս ալ պիտի տկարա-

Մար լաւութիւն կ'սորհի. ինչ որ տնօրինէ մեզի բարի է :

ՆԱԽԱՐԱՐՔՆ ԱՄՐՈՂՋ

Շատ բարւոք խօսեցար. պէտք է ազգի ընդհանուր Հայրապետն ալ այս խորհրդեան մէջ գտնուի, ուստի ալ մի յապաղիք ելէք ու միաբանութեամբ երթանք. միայն թէ զգուշութեամբ. որպէս զի Արտաշիրն չիմանայ մեր գաղտնի խորհուրդը :

Նախարարքն Հայոց կ'ժողովին Վաղարշապատու Հայրապետանոցն եւ Խաչակ Պարթեւին ներկայանալով, մեծատեան կ'կազմի. ուր կ'սկսի խօսիլ Սուրբ Հայրապետն այսպէս :

Ողջոյն է ձեր գալուստը, պատուական Նախարարք Հայոց. ուրախ եմ ձեր այդպիսի միաբանական խումբին վերայ. որուն վախճանը կ'յուսամ հայրենեաց լաւութեան եւ շինութեան համար է. բայց ձեր ամէնուրեք կերպարանքին վերայ միօրինակ զուարթութիւն չեմ տեսնար. որով կ'նշմարեմ եթէ ձեր սիրտը իրարմէ տարաձայն խորհուրդներ կ'կրեն կ'տեսնամ իրարու հետ կ'բրթ մնջիք. վախճմթէ արտաքին թշնամիները գլուխ վերցուցերեն :

ՍԻՒՆԵԱՅ ՏԻՐ

Հայրապետ սուրբ, մեր այս աւուր իշխանախումբ ժողովը ուրիշ նպատակ չունի. այլ միայն հայրենեաց օգտի համար է. մեր թշնամին արտաքին չէ, հապա ընտանի եւ մեր գլուխն է : Ձեզ յայտնի է, վեհագոյն Տէր, Արտաշիր եւ իւր անօրէն գործքերը. որով գայթաղութեան նշաւակ

չկամիմ բնաւ տիրադրութ հոգւով, յանդուգն ոտքով կործանել այն թագն, զոր իմ ձեռքս դրերեմ նորա գլուխը. գլուխն անարժան է, թող տուէք թող իւր անարժանութեամբ վերջանայ եւ ուրիշի գլուխ դրուի այն թագը. բայց դուք ձեր վառ խորհրդով թագին գէմն ալ մեղանչել կուգէք. Արշակունեան պայծառ արեւ կը շիջուցանէք եւ պարսից կրակ կը բերէք, չէք մտածեր, մեր հայրենիքը եւ մեր տունը պիտի հրդեհէ եւ այրէ, հոգ մոխիր դարձունելով

ՎԱՉԻ ԱՐԾՐՈՒՆԵԱՑ ՏԵՐ

Արցաւիմ, Սմբատ Ասպետ, թէ ինչպէս քանի մի համաձայն կարծիքներով այնչափ միաբանող Նախարարաց դէմը կ'մաքառիք. Զարմանք չէ, դուք որովհետեւ թագաւորութեան պաշտօն ունիք, փառասիրութեան հոգին միշտ կ'ընէ լազրէ. զձեզ յորդուց յորդի թագադիր հանդիսանալ. բայց գլուխն արժանաւոր եղերէ, չանարժան եղերէ բնաւ ձեր հոգ չէ, վասն զի պաշտօնասիրութեան հոգին տիրող յանցաւորութիւն կ'ծածկէ եւ կ'պաշտպանէ ամենայն զօրութեամբ. ի վերջոյ յայտնապէս ասեմ քեզ. որչափ կուգես երկու ձեռքով պինդ բռնէ կարող չեո պաշտպանելու մինչդեռ ամբողջ իշխանաւորք Հայոց դատախազ են.

ՎԱՐԴԱՆ ՍՏԲՍԵԼԱՏ

Դուք ինչ կ'կարծէք. Արժրունեաց տէր, միթէ տիրաւեր զօրք Հայոց. եւ հասարակ ժողովուրդք հայրենեաց քաղաքացիք եւ շինականն կ'հաւանին այդպիսի յիմար խորհրդեանն. երբ կ'մտած են, որ այդ գլխոյն մահը անշուշտ

այն հզօր հովանիքը որուն տակը պատասխարուած է Ամբողջ
Հայաստանին բախօր :

ՆԱԽԱՐԱՐԻ ՄԻԱԲԱՆ

Պէտք չէ , պէտք չէ մեզի այն հովանիքը , թող չորնայ
նորա ծառը : որուն թանտ պտուղից պայծառ դուրեան ա-
ռիթ է ամենուս : թող Աւետարանին զճնոյ իրաւունք
տայ մեզ սուրբ Հայրապետ «Ամենայն ծառ որ ոչ անկէ
զպտուղ բարի հատանի եւ ի հուր արկանի» : Դուք ինչ
ճշմարիտ փաստերով կարող էք ներհակիլ մինչդեռ Յիսուսը
իբրեւ տէր հրաման կնէ , եկեղեցւոյ պարտիզի մէջէն
անպտուղ եւ երկիր խափանող ծառերը սուանց խնայուն
կորել : Դուք , վսեմամիտ Հայրապետ , որ Քրիստոսի ե-
կեղեցւոյն հաւատարիմ մշակն էք . գործադրեցէք այն
ապառնալից պատուերը , որ կըսէ ի Կորնթա գղա ընդէր
զերկիրդ խափանէ :

ՍՈՒՐԲՆ ՍԱՀԱՍ

Հայրական սրտիս անհնարին ցաւերը լեզուս լռութեամբ
փակեր են , ահ , մեծին Հայաստանի ազադայ աղէտներուն
պատկերը աչքիս դիմաց բերելով հեռատեսութեամբ կը-
նշմարեմ ու կ'տեսնամ բազմադիմի թշուառութիւններ ա-
ղատ իշխանութեան տեղ , ծառայութիւն եւ պերութիւն ,
Արշակունեան բարձրագոյն գահին տեղը ստրկութեան գե-
տին եւ անեղանելի խորխորատ կարծոտից մուրացկանու-
թեամբ , հոյակապ ու փառաւոր Մայրաքաղաքաց եւ չէն
չէն գաւառներուն տեղը քանդու մնաւ երուամն եւ ապա-

լաւ և ճանչնամ զձեզ թէ ինչ սերունդ էք : Քրիստոսին
 խօսքը և կրկնեմ ձեզ . դուք որդիք էք այնպիսի նախնեաց,
 որոնք սուրբ Եփրատին ջուրով լուսացուեին յետոյ՝ դեռ
 կուգէին թաւալիլ հեթանոսական զազրագործութե մէջը .
 այն տեղը ձեր նախնիքը ապիրատ մտքով շաղախեցին իրենց
 ձեռքը սուրբ Տրդատայ արիւնով, զորոնք իբրեւ հայր կը
 խրատէր, ուղղութեամբ պաշտել սուրբ կրօն եւ հեթա-
 նոսական մոլորութենէն հեռի մնալ . դուք այս տեղը
 զԱրտաշիր իբրեւ պարտաւոր կուգէք դատապարտել . մինչ-
 դեռ Աւետարանին ներողութեամբ ես արձակել կուգեմ .
 դատապարտեցէք, որպէս զի վկայութիւն տաք ձեր ան-
 ձին համար . թէ դուք նոյն նախնեաց որդիքներն էք եւ
 և փափագիք միշտ նոցա անօրէնութեան չափ լեցնել :

ՎԱՐԱԶՎԱՂԱՆ

Այդ չափ ծանր ծանր թշնամանքներ մեր վրայ բարդել
 մի թէ իրաւունք է . նախնեաց բարբարոս գործքերուն
 զմեզ հաղորդ և համարիւմք . ահա յայտնապէս կըբո-
 Ղաքենք Արտաշիրն դէմը . չեմք ուզեր նախնեաց պէս
 խարդախութեան բաժակով մի զրաւել զինքն . հայրենի
 շինութեան համար մեզի առողջ գլուխ պէտք է . թող
 բարձուի այն անպիտան գլուխը, որ անարժանութեամբ
 և կրէ իւր վրան Արշակունեան պայծառ թագը, ձե-
 մարիտ խօսենք քեզ, ով Հայրապետ, թէ միաբանիս
 մեզի հետ ոյս մասին՝ բարեօքէ . եւ թէ չմիաբա-
 նիս՝ մինչեւ Պարսից դուռը պիտի բողբոքենք . վեր-
 ջապէս մեր մօքի զրաժ խորհուրդը գլուխ պիտի
 տանենք .

խաբէութեամբ մեր Տիրան Թագաւորի աչքերը փորեցին եւ Արշակ Թագաւորը Յանուշ բերդ արօրեցին :

Յիշեցէք ինչո՞ւ կ'մոռնաք . ախ, քանի քանի անգամ մեր անպարտելի զօրապետները, քաջակորով ու կարիճ զօրքերը, պատուական նախարարները սուր քաշեցին, Հայոց տիկնայ մարմին տիկ Հանին, իբրեւ իշաւակ աշտարակներու վրայ կախեցին : Թող տանք ասոնք, հապա այն որ ձեռք զարկին Քրիստոսի եկեղեցին հալածել . սուրբ տաճարներ քանդել ատրուշաններ շինել . կ'յիշէք Թէ ինչպէս վերջացան Հայրենեաց անմահ քաջերը Վասակ Մամիկոնեան և Գաւազոն Պամպրակսն : Միտ բերէք Յոնաթանի հանձարաւոր առակը . Աբիմեւէքի նման դժնիկ փուշէ Պարսկը իւր ծոցէն կրակ պիտի հանէ ու հայկազանց մեծամեծ անտառները պիտի հրդեհէ : Դուք մի Թէ անվնաս պիտի մնաք, որ այժմ իբրեւ խելակորոյս կուզէք այն դժնիկ իշխանութեան հովանեաց տակ պատուաբերիլ : Արշակունեան քաղաք եւ հզօր հովանիքը կ'մերժէք, որ վեց հարիւր տարիի չտի եղաւ զձեզ կ'պսշտանէ բռնաւոր Թշնամիներու ձեռքէն : Թէ յանցաւոր եւ վտար վերջին Արտաշիր . գոնէ նորա քաջագործ նախնեաց առաքինութեան համար ինչպեցէք իրեն : Թիրադրուժ մի լինիք, ո՞հ քանի յիմարութիւն է :

Յիտու գաւանդ հաւատացեալ Տէր մի անհաւատ ու մի անգամայն բարձարոս տիրոջ հետ փոխանակել : Ա՛հ երանի Թէ ինչպէս Սահակայ նախառեհութիւն կ'նշմարէ հայրենեաց աղետօտի տապալի, զոր դուք ձեր ձեռք կրէրէք, այժմ հայերիկ պէս ձեր աչքին ալ երեւնար տեսնայիք . գուցէ անով ճմլէր ձեր խտացած սիրտը, ետ մնայիք այդ հայրենակործան ձեռնարկութիւն :

ՎԱՐԱԶՎԱՂԱՆ

Երկարապատում խօսքերով զմեզ համոզել կ'ընես ,
Տէր Հայրապետ , բայց գիտե՛ք , մեք հաստատուն խորհրդ
դով ու միաբան դաշնադրութեամբ որոշերեմք մեր մէջը .
Արտաշէր իւր գահէն պիտի մերժուի , ուրիշ ճար չիկայ :
Մի թէ առանց Արշակունեան Թագաւորութեան՝ Հայ-
աստան պիտի աւերի . ոչ ապաքէն հայրենի լծնամեաց դէմք
պատերազմ մղող Քաջագոր նախարարաց խումբն է : Թող
վերջանայ Թագաւորութիւնն , մեք կարող ենք ամէն մէկ
մեր սեփհական աշխարհներ կառավարել : Հայաստանի
կեանքը մեր միաբանութեան վերայ է , ու չէ թէ Թա-
գաւորութեան . ինչպէս հին հայկազանց ժամանակը ,
Տանուտերական իշխանութեամբ կ'կառավարուէր :

ՆԱԽԱՐԱՐ ԽԱՐԱՆ

Այժմ մենք ամենքս ալ այսպէս կ'կամինք . շատ քապահօյժե-
մեզի համար Տանուտերական իշխանութիւնը : անա մեք
խորաքանջելու մեր ընդ արձակ աշխարհներու մէջ շատ անառիկ
դղեակներ եւ բերդեր ունինք : Թագաւորութիւն չէ որ
զմեզ կ'պաշտպանէ , հապա մեր ոյժ եւ զօրութիւն : Ու-
րեմն թող բարձուի , պէտք չէ , այսպէս կ'կամինք եւ այս-
պէս կ'վճռենք միաբան նախարարներս : Իսկ Գու ո՞վ Հայ-
րապետ , որովհետեւ չես կամիր մեզի հետ միաբանիլ Ար-
տաշէրը մերժելու համար , անա եւ մեք չենք կամիր :
որ դուն քահանայապետ լինիս Հայաստանեայց եկեղեցւոյն .
քու հայրապետական գաւազանն ալ թող բարձուի . Այժմ

կուռեան թագին հետը թող ունայն մնայ Այրարատայ
Աթոռը

ՍՈՒՐԻՆ ՍԱՀԱԿ

Նախարարք Հայոց , էլ ուրիշ բան չունիմ ձեզ խօսելու
բայց միայն սուրբ Ստեփաննոսի կրշտամբանքը . « Խստա-
պարանոց եւ անթլպատ սրտիւք դուք հանապազ հոգւոյն
սրբոյ հակառակ կայք » : Աստուածատուր իշխանութեան
եւ Գրիգորի գաւազանին դէմը կ'մտքառէք . ամբարհա-
ւաճ փառափրութեան հոգին ձեզ յոյնալ կուտայ այդ
փքալից խորհուրդները . մէկ մէկ զլուխ եւ թագաւոր
ձեւանալ հւազէք դուք իւրաքանչիւր ձեր աշխարհներու
մէջը . ամուր գլխակներու եւ բերդերու վերայ պարծենա-
լով՝ հզօր թագաւորութեան աթոռ մի կ'ապալէք դուք .
փոխանակ թագաւորութեան գլխոյն հետ միանալու եւ
հայրենեաց թշնամիներուն դէմը կուռելու , աւաղ կ'բա-
ժանիք այն գլխէն եւ ամէն մէկ անդամներդ թագաւորել
կուզէք : Թագաւորութիւն բաժանեալ յանձն իւր՝ աւե-
րի . նմանապէս անձն ալ թագաւորութեան դէմը ապրա-
տամբելով կ'մեռնի : Ի՞նչ շահեցայք արդեօք , յիմար
ուշակորցաներ . սուրբ Տրդատայ մահուանէն յետոյ . սուր
հանելով իրարու կողը մխեցիք . Խորխոռունեան եւ Բրդ-
նունեան պատուական նախարարութիւնները ջնջուեցան .
դուք ալ նմանապէս պիտի ջնջէք զիրեար : Մինչդեռ Ար-
շակունիան թագաւորութեան սաստը , եւ Գրիգորի հայրա-
կան գաւազանը ձեր խստասրտութիւն չի կրնար նուաճել .
կ'յուսա՞ք , որ դուք խաղաղութեան մէջ ապրիք . եւ թըն-
նամութեամբ իրարու արիւն չխմէք : Ի բաց գնացէք մի-
նէն ի բաց գնացէք , յաւիտեան չեմ միաբանիր ձեր թիւն

խորհրդեան հետք իմ ակտացեալ ոչխարն Արտաշիր, չեմ
փոխանակեր աստղ կարծեցեալ գաղանին հետը, Յիսուս
խօստովանող անձը չեմ հաներ Պարսից ատեանը, Աւետա-
րանին ներողութեամբ արձակեալ յանցաւոր մի իբրեւ դա-
տախազ չեմ կարող մատնել ու դատապարտել անկրօն ա-
նիրաւոյ առաջը : Ահա Հայաստանեայց եկեղեցւոյ սուրբ
Ատեանը քննեցէք եւ դատապարտեցէք զինքն : Ինչո՞ւ
կարհամարհէք քրիստոնէութեան եւ ազգային պատիւը .
Աստուածային օրինաց վերաբերեալ վէճ մի՛ անօրինաց ա-
տենին կ'մատնէք : չէք խղճար եւ ամաչեր մինչդեռ Ա-
ւետարանին աշակերտը ամօթապարտ կ'առնէք հեթանոսնե-
րուն ասալը : Վախյալք Յիսուսի սպառնալիքէն . անագո-
րոյն չափով կ'չափէք այժմ ողորմելի Արտաշիրը . մի թէ
Աստուածային արդարութեան ձեռքը ձեզի ալ նոյնպէս
չպիտի չափէ : Այո՛ պիտի չափէ, վասն զի անողորմից հա-
մար՝ անողորմ դատաստան պիտի լինի : Գնացէք ալ բան
չունիմ ձեզ խօսելու . գնացէք, արիւն ձեր ի գլուխ ձեր
եղիցի, գնացէք Հայաստանի որդւոց ապագայ աղէտնե-
րուն պարտական եղիք . գնացէք, այսուհետեւ զարդինս
ձեռաց ձերոց կերելիք : գնացէք եւ ինչ պիտի ընէք՝ ըրէք
վաղվազակի . Արշակունեան թագաւորութիւնը պիտի խա-
չէք, խաչեցէք . որուն համար պիտի ողբայ Սահակյաւիտեան
որովհետեւ այժմէն կ'գուշակեմ, որ ալ յարութիւն չիք
Արշակունի թագաւորութեանն, ո՞հ, դուք ձեր ձեռքով
կենդանւոյն կ'մահացնէք զանի, ու դաւաճանութեան
դադաղին մէջ դնելով յուղարկաւոր կ'լինիք միջեւ պարսից
դուռը եւ Արշակունեան թագը կ'թաղէք դերեզմանի մի
մէջ . որ իբրեւ գթօխքը իւր բերանը լայն բացած, ոչ թէ
միայն Արտաշիրը, այլ եւ զձեզ ալ պիտի կուլ տայ եւ

չյազենայ : Իսկ Սահակայ համար այսուհետեւ ալ որիք բան չկայ, բայց միայն իբրեւ սգաւոր հայր մի Արշակունի շիրմին վերայ նստած պիտի ողբայ, իւր քահանայապետական գաւազանն ալ նորա քովը դնելով :

Սուրբն Սահակ առանձնացեալ ողբալով հարթե Սբշա-
կունեան թաղին կորստեան վերայ :

Դու, ով Տէր, Հայաստանի Աստուած, տեսանէս ինչ
է խորհին խստասիրտ իշխանք Հայոց : այն թագը, զոր
դու քո նախատեսութեամբ Արարատեան աշխարհին մէջ
հաստատեցեր, ո՛հ, ապաշնորհ հոգիները բառնալ կողքն
զանի. այն Պարթեւական գաւազանը, զոր դու մեր
նախնի սուրբ Գրիգորին ձեռքով Քահանայապետական շը
նորհիւ բողբոջեցուցիր Հայաստանեայց եկեղեցւոյ պարտի-
զին մէջ. ո՛հ անկայ ալ կորել կողքն ապերախտ որդիք-
ները : Դու Աստուած Արարհամու, նորա սուրբ սերունդ-
ներուն ձեռքով բազմապատիկ շնորհները ծաւալեցեր Հայ-
աստան աշխարհին մէջը, եթէ անարժան են Հայաստան
եայց որդիքները, զոնէ՛ սուրբ նահապետին սիրոյն հա-
մար խնայեա ու ցրուէ ասոնց վատ է թիւ խորհուրդները,
որոնք իրենց կամակոր անզգամութեամբ քո սուրբ եկեղե-
ցւոյ տառապեալ ժողովուրդը գազանաց ձեռք կմատնեն :
Գիտեմ ահա, պրտմուծ թիւնդ շարժեր է, ինչպէս Հրէաստա-
նէն, նմանապէս Հայաստանէն ալ պիտի բառնաս հզօր
մարդիկ, հանձարեղ մարդիկ. սուրդ վերուցեր ես Հայաս-
տանի անձնադիր հովիւն ալ պիտի հարկանես, որպէս զի
ոչխարները ցրուին : Բու կամքդ արդար է, Տէր, եղիցի
որպէս եւ կամիս, բայց ինձ Սահակիւ թող տուր երեմիային

դէս հայրենի կործանման փոշիներուն վերայ նստած յայ
բիտեան ողբալ :

Մնայեալ Տեսարանն Եփեսոսի

ԳԼԲԶ ԳԼԳ ԹԵԿԵՆ ՊԵՏԵՆԵԿԻ

Ի ՏԵՅՐԵՆԻՆ

Տեսէք ո՞վ է սա կուգայ պերճանազ ,
Շարերուն ոտքեր , թաթաւ ամպերաց :
Կփայլի զինչ հուր աչերն ու զէնքերը ,
Երկնից դէզ ամպեր կարծես բռնկեր :

Տեսէք ո՞վ է սա երկնուց գայ արագ ,
Ո՞վ , շաղ մարգարտի , գոգ նոր թաղուորակ :
Ոսկեզօծ օծէ պարտեզ , 'ւ ագարակ ,
Կխայտայ բնութիւն դաշտ , բոյս կանաչ մարգ :

Տեսէք ո՞վ է սա՝ արեւ լուսարձակ ,
Ողջն նուիրէ առ լիրանց գաղաթ :
Օրարթօրէն առաք ծառայի պոյծառ
Եւ բնութիւն պշնի նորտնով հաւսար :

Տրաչեկ կամակար յանդուզն նժոյգով ,
Տեժած կ վառուի պատած զէնքերով ,
Ո՞վ զաւակ Տայոյ սերունդ քաջազանց ,
Ո՞ր զօրէն արեւ արագ ընթանաս :

Լյդպէս դու ահեղ, ո՞վ հրեղէն հոգի,

Խոյանաս երթաս դէպի արեւելք:

— Հայաստան, առ քեզ, արդ գամ ես արագ,

Օ աւակ քո պանդուխտ, զաւակ տարաբաւ:

Այդ եւ անագան

Ես գամ Հայաստան,

Մեռնիմ Հայաստան,

Մօտ հարցս իմ դամբան:

Բ

Լրդ, երկինք, արեւ եւ լուսին, աստղեր,

Ինձ շաւիղ ահա Յիսուսն է բացեր:

Ես գամ, ես սիրեմ զեղբայր, հայրենիք,

Հայրենիքն իմ սուրբ եւ հոգւոյ տեղիք:

Ուր հայկ քաղցր իքուն եւ Լրամ, Լրայն

Դիւցազանց յաղթողք՝ Նիւքարին, Բէլայն,

Ուր մայր Հայաստան ծնաւ վեհ որդիք

Հայկայ ու Լրամայ, Տիգրանայ նմանիք:

Բա՛նժդեհիս գլխով թնդ պատի այն հով

Հայոց լեռներուն եւ հովիտներուն,

Խող լեցուի գորով. ա՛յն, սրտիս խորով,

Լմբի՛ծ հայերով եւ սուրբ տեղերով:

Եւ գամ ես հարք,

Ուր հայրն իմ հայկ.

Ուր բլաւ բէլ,

Եւ պարտեաւ Մար:

Տամ ես իմ արիւնն

Սասիս թող մնայ :

Դ

Եւմահ Եւրարտտ քաջաց վեհարան ,

Կաց , երկինք հրաւեր տայ ինձ իշայլ տեղ :

Ուր կարմիր վարդեր եւ սուրբ շուշաններ

Յաղթական բացուեր Հայոց զրօշակները :

Եւնինքն է Եւրտաղ , արտ պատերազմաց ,

Անդ հոգնած մշակք , անդ հանդիստ քնած .

Սարդան ու Սահան , Եւսէն , Հմայեակ :

Երթամ համբուրեմ սրտով սիրակաթ

Հայոց վեհ որդւոց վառվառն ճակատ ,

Որոնք մէջ ծաղկանց յորդ կարմիր արեանց :

Օ ինչ նոր արեւակ կ'իայլին հեռունց :

Սոքա դերանդանց

Օ օրութեան Հայեր ,

Իւշնամեսց ձեռաց

Եւեր են մահեր :

Ե

Իսկ ես հիմիկ երթամ հայրենիք

Եկէք հետ ինձի , դուք սիրուն մանկտիք ,

Փութամք մեք այն տեղ ուր տեղ շատ աւեր

Դէզադէզ փռուած Տաճարաց քարեր :

Ի թխանակ Հայոց պատանեսց , ուհեաց

Եւղու աղուորակ ծաղիկ են ծաղկած ,

լու հարցուց: արդե՞ք դրացուս տունը վնասած է, ասացին: Թէ կայրի ահա, աճապարէ ազատելու կարաւիքդ: պատասխանեց իսկոյն անխռով դէմքով առանց այլայլելու:

Ես աւելի Թանկ բանմը ունիմ՝ փրկելու, իմ անբախտ դրացին հիւանդ է եւ չունի կարողութիւն զինքն դանդաղելու: նա անպատճառ հրոյճարակ կ'լինի. եթէ չհասնիմ նորաօգնութեան. ես անտարակոյս եմ՝ որ նա յոյս ունի ինձ համար իրեն փրկութեան հասնելու:

Իսկոյն Թաւ սլացաւ դէպ ի այն վատարախտ դրացուն բռնկած տունը առանց իրեն շուրջ ցոյբերը մտմտալու եւ առանց իւր կենաց վտանգ միտ բերելու ու ամենեւին անվեհեր մտաւ դրացոյն տան մէջ՝ ուր աեղ կրակը խեղճ հիւանդի մահիճին կ'հասնէր այն՝ որ առկայ չեալ ճրագիմը պէս առանց փչելու կ'մարէր. ու տան գերաններն ել վառուվաճճեւ մօտ էր կործանելու շինականի վերայ. բայց նա հայու վեհ սրտով յառաջ անցաւ հիւանդին քով. վասնզի յոյս մեծ ունէր ազատել այն վտանգէն, յորմէ ամէն դրացիքն խոյս էին տուեր:

Հասաւ իւր դրացուն եւ յաջողութեամբ ազատեց զանի: Բէօքն Հաւնի իշխանաւոր տեսնալով այս ջնաշխարհիկ մարդասիրութիւն, ընծայից այն շինականին մի լիցուն բաժակ ոսկի. որոյ (բաժակի) խաւիքն էր մի քաղաքական պսակը, եւ ճութերէն կախուած էին հրկու յիշատակարան, որոնց վերայ գրուած եւս էր «Շինականի արխան գործը»:

Եստ մարդ իկ ընծաները տուին այն գեղացուն իւր վնասներուն փոխարէն: ասոնց բարեգործութիւնը արժանի է գութութեան. որովհետեւ այնպէս է առաքինութիւնը վարձաւըրել. որպէս թէ սիրտ տաս առաքինութիւն գործելու:

ԱՆՁՆԱՆՈՒԷՐ

ԳՈՐԾԱՍԼԷՔ ԸՆԿԵՐԱԳՐՈՒԹԵԱՆ

ՎԱՆ.Պ.Մկրտիչ Տ. Ատոմեան :

ԲԱՂԷՇ.Պ. Տիգրան Կալփակչեան Պօլսեցի :

ՄՈՒՇ.Ազա Վարդան Մամիկոնեան :

ԿԱՐԻՆ. Խաչատուր Խան Տ. Ներսիսեանց :

ՏՐԸՊԻ ԶՈՆ.Պ. Ստեփան Մ. Յակովբեանց :

ՊՕԼԻՍ. Ղեւոնդ Վարդ յպեա միաբան Վարադայ :

ՏՓԻՒՍ. Պ. Համբարձում Էնֆիաճեանց հրատարակիչ :

Արուսէկ Հայոց աշխարհի պատուական ամսագրոյն. եւ

Պ. Գարեգին Մուրատեան :

ԳԱՆՁԱԿ. Պ. Ներսէս Արաշամեան :

ՂԱՐԱԲԱՂ. Ընթերցատիրաց Թանգարան :

ԱՆԵՔՍԱՆԴՐԱՊՕԼ. Սեմէոն Սարկաւադ Օրէնա-
ռաւոյց յԱրքուշէ ուսու միարանին :

ՆՈՐ ՊԱՅԱԶԻՏ. Աղա Քարոնդ Արծրունեաց :

ԵՐԵՒԱՆ. Պ. Զաքար Տ. Յովհաննէսեան :

ՆԱԽԶՈՒԱՆ. Մ. Մկրտիչ Թումեան :

ՎԵՐԻՆ ԱԳՈՒԼԻՍ. Պ. Գառնար Ասլանեանց :

ՆԵՐՐԻՆ. — Ռատամետէր Տ. Յակոբ քահա-
նայ Տ. Անդրէասեանց :


ԴԱՎՐԵԺ. Մատթէոս Նազարեանց եւ Յովհաննէս Շըխ-
եանց Ղարաբաղցի վաճառանք ուսու միասէր Պարոնսք :

ՍԱԼԱՄԱՏ. Ազա Պատաղ Արզումանեան :



ԲՈՎՆԴԱՆՈՒԹԻՒՆ ՆԻՒԹՈՑ

Հայրենիաց նոր յառաջագիմբէ համար՝ Մարշ պէտք է թէ յաշմանադրութիւն.	225
Խնդիր ուսումնասիրաց առ Արծաին.	233
Թատրոնական վէպ, վերջին Երասչիւ Թաղաւոր.	234
Դարձ գաղթական պատանեկի ի հայրենին.	251
Շինականի մը ազնուաբարձութիւն.	255



ԳԻՆ ՏԱՐԵՎԱՆ ԸՆՍԵՐԱԳՐՈՒԹԵԱՆ ՎԱՆՆՈՒ

Ի վան, 'ի Բաշէշ, 'ի Մոշ, 'ի Կարին, երկուսն էլ Օսմանի խան շո-րոշնոց արձաթ Մեճիպէէ ։

Իսկ Պոլսէն Տաճկաստանի ուրիշ խաչաշէրը երէտ արձաթ խան շո-րոշնոց Մեճիպէէ ։

Ինչ որ աստիճան եր 'ի Պարսկաստան չորս արձաթ Մանէէ ։

Ճանապարհին ճախ Խըմբադէր պիտի լծալէ ։

